



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1՝ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (Կոմիտե) միջև կնքված Կառավարման ծառայությունների մատուցման համաձայնագրին (Management Service Agreement – MSA)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Նախագծի ծածկագիր:	ARM24802 (FAM2402)
Նախագծի անվանումը:	Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում
Կատարող կազմակերպություն:	ԻԿԱՕ
Իրականացնող կազմակերպություն:	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն)
Ակնկալվող մեկնարկի ամսաթիվ:	2026 թվականի III եռամսյակ
Նախատեսվող տևողություն:	12 ամիս
Նախագծի արժեքը:	803 200 (ութ հարյուր երեք հազար երկու հարյուր) ԱՄՆ դոլլար

Նախագծի համառոտ նկարագրություն

Սույն նախագիծը նպատակ ունի աջակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ոլորտի իրավասու մարմինների՝ ներառյալ կանոնակարգման և վերահսկողության գործառնություններ իրականացնող Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (Կոմիտե) և ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության համար պատասխանատու անկախ մարմնի՝ Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի (Բաժին) ինստիտուցիոնալ հզորացմանը՝ ապահովելու դրանց արդյունավետությունն ու կայունությունը, այդ թվում՝ բավարար որակավորում և փորձ ունեցող տեխնիկական մասնագետներ ներգրավելու, վերապատրաստելու և պահպանելու կարողությունը: Նախագիծը կիրականացվի փորձագիտական խորհրդատվական ծառայությունների միջոցով, որոնք կընդգրկեն իրավական և կարգավորող բարեփոխումներ, կազմակերպական և վարչական համակարգերի գնահատում ու վերանայում, ինչպես նաև կայուն ֆինանսավորման և մարդկային ռեսուրսների կառավարման շրջանակների ձևավորում՝ ԻԿԱՕ Ստանդարտների և առաջարկվող գործելակերպերի (SARPs), համապատասխան ուղեցույցների և միջազգային լավագույն փորձի:

Ստորագրվել է ի դեմս

Ստորագրություն

**Անուն, ազգանուն
և պաշտոն**

Ամսաթիվ

Քաղաքացիական
ավիացիայի միջազգային
կազմակերպության



For

**Խուան Կառլոս
Սալասար**
Գլխավոր քարտուղար

30/6/2026 | 13:29 PDT

Հայաստանի
Հանրապետության
տարածքային կառավարման
և ենթակառուցվածքների
նախարարության

Արթուր Երիցյան
Գլխավոր քարտուղար

Սա սահմանափակ օգտագործման փաստաթուղթ է, նախատեսված բացառապես Նախարարության և ԻԿԱՕ-ի օգտագործման համար: Սույն փաստաթուղթը հրապարակվում է թափանցիկության ապահովման նպատակով: Փաստաթղթի որևէ մաս չի կարող վերարտադրվել կամ օգտագործվել որևէ ձևով՝ որևէ անհատի, ընկերության կամ կազմակերպության կողմից՝ առանց ԻԿԱՕ-ի գրավոր համաձայնության:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

1. ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՏԵՔՍՏ

1.1 Նախապատմություն

1.1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրականացնում է իր քաղաքացիական ավիացիայի կառավարման համակարգի համապարփակ բարեփոխում: Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (Կոմիտե), որը ներկայումս գործում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ենթակայության ներքո, իրականացնում է քաղաքացիական ավիացիայի մարմնի գործառնությունները: Սակայն Կոմիտեն գործում է քաղաքացիական ծառայության սահմանափակումների ներքո, որոնք սահմանափակում են մասնագիտացված ավիացիոն տեխնիկական փորձագետների ներգրավումը և պահպանումը, ծախսերի փոխհատուցման սկզբունքի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրումը, ինչպես նաև ժամանակակից և արդյունավետ քաղաքացիական ավիացիայի մարմնին բնորոշ գործառնական անկախության ապահովումը: Կառավարությունը որպես ռազմավարական առաջնահերթություն է սահմանել Կոմիտեի վերափոխումը լիովին ինքնավար քաղաքացիական ավիացիայի մարմնի, որը կկարողանա գործել կայուն՝ ծախսերի փոխհատուցման սկզբունքով, ներգրավել բարձր որակավորում ունեցող անձնակազմ, այդ թվում՝ ղեկավար կազմում միջազգային մասնագետների, ինչպես նաև ապահովել իր վերահսկողության, կանոնակարգման և սերտիֆիկացման գործառնությունների երկարաժամկետ կենսունակությունը: Չուգահեռաբար, Կառավարությունը որպես լրացուցիչ ինստիտուցիոնալ առաջնահերթություն է սահմանել Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի (Բաժին) կազմակերպական կարողությունների, ինչպես նաև գործառնական և ֆինանսական անկախության ամրապնդման անհրաժեշտությունը:

1.1.2 Բարեփոխումը պայմանավորված է երեք հիմնարար պահանջներով: Առաջին՝ քաղաքացիական ծառայության կանոնները Կոմիտեին չեն թույլատրում առաջարկել մրցունակ աշխատավարձեր, կիրառել մասնագիտացված հավաքագրման չափանիշներ և պահպանել վերահսկողություն իրականացնող որակավորված փորձագետներին: Երկրորդ՝ տարեկան պետական բյուջեի հատկացումներից կախվածությունը, այլ ոչ թե ծախսերի փոխհատուցման վրա հիմնված համակարգը, թուլացնում է ֆինանսական կայունությունը: Երրորդ՝ Կոմիտեի կազմակերպական կառուցվածքը, ընթացակարգերը և վարչական շրջանակները պահանջում են արդիականացում: 2024-2025 թվականներին իրականացված խորհրդակցություններից հետո ԻԿԱՕ-ն և Հայաստանի Հանրապետության կառավարությունը համաձայնության են եկել իրականացնել կառուցվածքային Փուլ 1 բարեփոխումների ծրագիր: Բոլոր գործողությունները իրականացվում են 2024 թվականի մարտի 8-ի Կառավարման ծառայությունների համաձայնագրի (MSA) ներքո (սույն փաստաթուղթը հանդիսանում է դրա Հավելված 1-ը):

1.2 Նախագծի շրջանակը

1.2.1 Նախագիծը անդրադառնում է վերոնշյալ ինստիտուցիոնալ բարեփոխումներին երեք հիմնական ուղղություններով՝

(ա) Ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխում՝ Կոմիտեի իրավական և ինստիտուցիոնալ կարգավիճակի վերանայում, ինչպես նաև օրենսդրական նախագծերի մշակում՝ քաղաքացիական ավիացիայի հիմնական օրենքը և կիրառվող ենթաօրենսդրական ակտերը համապատասխանեցնելու ԻԿԱՕ-ի կիրառելի SARP-ին, համապատասխան ուղեցույցներին և լավագույն փորձին, ինչպես նաև կառավարման և կարգավորիչ կայունության ամրապնդում:

(բ) Կազմակերպական, վարչական և գործառնական վերանայում՝ Կոմիտեի կազմակերպական

կառուցվածքի և ներքին գործընթացների օպտիմալացում, վարչական և ընթացակարգային շրջանակների ու ձեռնարկների վերանայում, ինչպես նաև անցումային աջակցություն:

(գ) Կայուն ֆինանսավորման և մարդկային ռեսուրսների շրջանակ՝ ծախսերի փոխհատուցման և ֆինանսական ինքնավարության մոդելների նախագծում, հաստիքային կարիքների որոշում, պաշտոնի անձնագրերի մշակում, ինչպես նաև որակավորված անձնակազմ ներգրավելու և պահպանելու աջակցություն:

1.2.2 Նախագծի ավարտին Հայաստանի Հանրապետությունը կունենա՝

- ա) Կոմիտեի արդյունավետ, կայուն և ինքնավար գործունեությունն ապահովող իրավական և ինստիտուցիոնալ շրջանակ:
- բ) Բաժնի արդյունավետ, կայուն և անկախ գործունեությունն ապահովող իրավական և ինստիտուցիոնալ շրջանակ:
- գ) օրենսդրական բարեփոխումների փաթեթ, ներառյալ քաղաքացիական ավիացիայի հիմնական օրենքում փոփոխությունների նախագծեր և առաջնահերթ ենթաօրենսդրական ակտեր, որոնք համապատասխանեցված են ԻԿԱՕ-ի կիրառելի SARPs-ին, այդ թվում նաև ԻԿԱՕ Հավելված 13-ին:
- դ) Կոմիտեի և Բաժնի համար արդյունավետ և կայուն ֆինանսավորման մեխանիզմներ:
- ե) Կոմիտեի և Բաժնի օպտիմալացված կազմակերպական կառուցվածքներ՝ հաստիքային պլաններով և հիմնական պաշտոնների անձնագրերով:
- զ) Կոմիտեի և Բաժնի հիմնական գործառնությունների համար վերանայված կազմակերպական, վարչական և ընթացակարգային ձեռնարկներ:
- է) մարդկային ռեսուրսների շրջանակ, որը կաջակցի Կոմիտեի և Բաժնի համար որակավորված փորձագետների հավաքագրմանը, զարգացմանը և պահպանմանը:

1.3 Լրացուցիչ աջակցություն

1.3.1 Սույն փաստաթղթում արտացոլված աջակցության շրջանակում կարող է անհրաժեշտ լինել փոփոխություն իրականացնել նախագծի գործողությունների ընթացքում կամ դրանց ավարտից հետո, ինչպես նաև ներկայումս սահմանված շրջանակից դուրս լրացուցիչ աջակցություն: Եթե նման անհրաժեշտություններ առաջանան, հնարավոր է վերանայել սույն նախագծի շրջանակը կամ մշակել նոր, առանձին նախագծեր:

1.4 Ռազմավարական նպատակներ

1.4.1 Սույն նախագիծը համապատասխանում է ԻԿԱՕ-ի հետևյալ ռազմավարական նպատակներին՝ «Յուրաքանչյուր թռիչք անվտանգ և ապահով է. Ոչ մի երկիր հետ չի մնում:»

2. ՆԱԽԱԳԾԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նպատակ 1	ԻԿԱՕ-ի փորձագետների ներգրավում, նախագծի աշխատանքային պլանի և ռիսկերի կառավարման պլանի հաստատում
Արդյունավետության ցուցանիշներ	- Նախագծի ամբողջ անձնակազմը ներգրավված է: - Նախագծի աշխատանքային պլանը և ԻԿԱՕ-ի փորձագետների անհատական աշխատանքային պլանները հաստատված են ԻԿԱՕ-ի և Նախարարության կողմից: - Նախագծի ռիսկերի կառավարման պլանը հաստատված է ԻԿԱՕ-ի և Նախարարության կողմից: - Բրիֆինգի և դեբրիֆինգի հաճախումներ

Արդյունք 1.1	ԻԿԱՕ-ի փորձագետները ընտրված և ներգրավված են
Արդյունք 1.2	Ազգային անձնակազմը ընտրված և նշանակված է
Արդյունք 1.3	Նախագծի աշխատանքային պլանը վերանայված և հաստատված է, ներառյալ բրիֆինգի հանդիպումը
Արդյունք 1.4	Նախագծի ռիսկերի կառավարման պլանը վերանայված և հաստատված է

Նպատակ 2	Կոմիտեի և Բաժնի համապարփակ ախտորոշիչ գնահատում
Արդյունավետության ցուցանիշ	<i>Համապարփակ ախտորոշիչ գնահատման զեկույցը պատրաստված և հաստատված է ԻԿԱՕ-ի, Կոմիտեի և Բաժնի կողմից՝ նախագծի մեկնարկից հետո 3 ամսվա ընթացքում:</i>
Արդյունք 2.1	Զեկույցի ներկայացում ընտրված մատակարար(ների) կողմից՝ ԻԿԱՕ-ի գնումների ծառայությունների աջակցությամբ
Արդյունք 2.2	Իրավական բացերի վերլուծության զեկույց, քաղաքացիական ավիացիայի հիմնական օրենքում փոփոխությունների նախագծեր և առաջնահերթ ենթաօրենսդրական ակտեր, որոնք համապատասխանեցված են ԻԿԱՕ-ի կիրառելի SARPs-ին, համապատասխան ուղեցույցներին և լավագույն փորձին, ըստ կիրառելիության:

Նպատակ 3	Կոմիտեի և Բաժնի կազմակերպական, վարչական և գործառնական վերանայում
Արդյունավետության ցուցանիշ	- Օպտիմիզացված կազմակերպական կառուցվածքները հաստատված են Կառավարության կողմից: - Մշակված և պաշտոնապես հանձնված են հիմնական կազմակերպական և ընթացակարգային ձեռնարկները:
Արդյունք 3.1	Կոմիտեի և Բաժնի կազմակերպական կառուցվածքներ

Նպատակ 4	Կայուն ֆինանսավորում, մարդկային ռեսուրսներ և կազմակերպական անցումային աջակցություն
Արդյունավետության ցուցանիշ	- Ֆինանսական ինքնավարության և ծախսերի փոխհատուցման շրջանակը հաստատված է Կառավարության կողմից: - Մարդկային ռեսուրսների շրջանակը և հաստիքային անցումային պլանը հաստատված են Կառավարության կողմից: - Անցումային աջակցության հիմնական փուլերը իրականացված են:
Արդյունք 4.1	Ֆինանսավորման մեխանիզմներ, մարդկային ռեսուրսների կառավարման շրջանակ, անձնակազմի անցումային պլան և Կոմիտեի ու Բաժնի կազմակերպական անցումային աջակցության զեկույց:

3. ՆԱԽԱԳԾԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

3.1 ԻԿԱՕ-ի ներդրումները (ֆինանսավորվում են Իրականացնող կազմակերպության կողմից)

3.1.1 **Ֆինանսավորում.** Նախարարությունը մինչև նախագծի գործունեության մեկնարկը ԻԿԱՕ-ին կփոխանցի 100% կանխավճար սույն նախագծի ամբողջական արժեքը ծածկելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

3.1.2 **Նախագծի անձնակազմ.** ԻԿԱՕ-ն կնքելու է պայմանագրեր և սույն նախագծում ներգրավելու է ստորև նշված փորձագետներին:

• Քաղաքացիական ավիացիայի օրենսդրության փորձագետ
• Ֆինանսական և բյուջետային հարցերի փորձագետ
Կազմակերպական զարգացման / մարդկային ռեսուրսների փորձագետ
• Կոմիտեի կառավարման փորձագետ / նախագծի համակարգող
• Բաժնի կառավարման փորձագետ

4. ՆԱԽԱԳԾԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Նախագծի մեկնարկից առաջ անհրաժեշտ է ապահովել հետևյալ պայմանների կատարումը.

4.1.1 Սույն Նախագծային փաստաթղթի ստորագրումը երկու կողմերի կողմից:

4.1.2 Նախագծի ծախսերը ծածկելու համար անհրաժեշտ ֆինանսավորման ապահովումը: Նախագիծը կհամարվի գործառնական առումով ակտիվ միայն ԻԿԱՕ-ի կողմից ֆինանսական միջոցների ստացումը հաստատելուց հետո:

4.1.3 Նախարարության կողմից ազգային համակարգողի նշանակումը և, ըստ անհրաժեշտության, համապատասխան պատասխանատու ներկայացուցիչների նշանակումը:

4.1.4 Անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը և/կամ ներկայացումը՝ ԻԿԱՕ-ի փորձագետների կողմից նախագծի շրջանակում նախատեսված գործունեության իրականացումը նրանց նշանակման մեկնարկից անմիջապես հետո սկսելու նպատակով:

4.1.5 ԻԿԱՕ-ի փորձագետների համար աշխատանքային վայրեր մուտք գործելու նպատակով պահանջվող թույլտվությունների նախապատրաստումը:

5. ՆԱԽԱԳԾԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՈՒՅՑ

5.1 Նախագծի նախնական ժամանակացույց

5.1.1 Նախագծի նախնական ժամանակացույցը ներկայացված է Հավելված Ա-ում: Սույն նախնական ժամանակացույցը ունի միայն ցուցադրական բնույթ: Մանրամասն աշխատանքային պլանը կմշակվի փորձագետների հավաքագրումից և նախագծում նրանց ներգրավվելուց հետո՝

ստորև 5.2 բաժնի համաձայն:

5.2 Նախագծային գործունեության մանրամասն պլանավորում

5.2.1 Նախագծի համակարգողը (PC) իր նշանակման մեկնարկից հետո երեք (3) շաբաթվա ընթացքում, համագործակցելով մյուս փորձագետների հետ, նախնական ժամանակացույցի հիման վրա մշակում է համախմբված աշխատանքային պլան: Այդ պլանը նախ ներկայացվում է ԻԿԱՕ-ին, ապա՝ Նախարարությանը՝ հաստատման համար:

6. ՆԱԽԱԳԾԻ ԲՅՈՒՋԵ

6.1 Նախագծի բյուջեն ներկայացված է Հավելված Բ-ում: Բյուջեի ընդհանուր գումարի ցանկացած փոփոխություն ենթակա է հաստատման՝ բյուջեի պաշտոնական վերանայման միջոցով:

7. ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐ

7.1 ԻԿԱՕ-ի փորձագետների պաշտոնների անձնագրերը ներկայացված են Հավելված Գ-ում: Պաշտոնների անձնագրերը կրում են նախնական բնույթ և կարող են փոփոխվել մանրամասն աշխատանքային պլանի հաստատումից հետո:

8. ՆԱԽԱԳԾԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ, ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1 Մոնիթորինգի միջոցառումներ

8.1.1 Նախագծի ընդհանուր իրականացումը վերահսկվում է կանոնավոր հաշվետվությունների և, ըստ անհրաժեշտության, նախագծի վերանայման հանդիպումների միջոցով:

8.1.2 ԻԿԱՕ-ն կիրականացնի և կվերահսկի նախագիծը՝ սերտ համագործակցությամբ Նախարարության կողմից նշանակված Ազգային համակարգողի հետ՝ համաձայն հաստատված աշխատանքային պլանի:

8.1.3 ԻԿԱՕ-ն, իր քաղաքականություններին և գործելակերպին համապատասխան, կիրականացնի նախագծի ֆինանսական հաշվառումը և բյուջետային վերահսկողությունը:

8.1.4 ԻԿԱՕ-ն կարող է իրականացնել տեղում առաքելություններ (missions)՝ նախագծի առաջընթացը վերահսկելու նպատակով՝ համաձայն հաստատված աշխատանքային պլանի կամ ըստ անհրաժեշտության:

8.2 Հաշվետվություններ

8.2.1 Հաշվետվությունները կներկայացվեն համապատասխան շահակիցներին՝ համաձայն հաստատված աշխատանքային պլանի:

8.2.2 Նախագծի համակարգողը (PC) ԻԿԱՕ-ին կներկայացնի հետևյալ փաստաթղթերը: ԻԿԱՕ-ի կողմից վերանայումից հետո դրանք կներկայացվեն Նախարարությանը:

ա) **Աշխատանքային պլան (Work Plan - WP)**, որը Նախագծի համակարգողը ԻԿԱՕ-ին կներկայացնի իր գործուղման մեկնարկից հետո 10 օրվա ընթացքում: Աշխատանքային պլանը պետք է ներառի նախագծի արդյունքների ապահովման համար անհրաժեշտ բոլոր

գործողությունները, մանրամասն ժամանակացույցը, հիմնական հանգրվանները (milestones) և առաջադրանքները:

բ) **Նախագծի առաջընթացի հաշվետվություն (Project Progress Report)**՝ ներկայացվող հաստատված աշխատանքային պլանին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության:

գ) **Նախագծի ավարտական հաշվետվություն (Project Terminal Report)**՝ ներկայացվող նախագծի ավարտին՝ ամփոփիչ հանդիպումից (debriefing meeting) հետո:

8.2.3 All reports may be submitted to RO for review and information as may be required./ Անհրաժեշտության դեպքում բոլոր հաշվետվությունները կարող են ներկայացվել նաև Տարածաշրջանային գրասենյակին (RO)՝ վերանայման և տեղեկատվության համար:

8.3 Նախագծի ներկայացման և վերանայման հանդիպումներ

8.3.1 Նախագծի մեկնարկային փուլում Նախարարության, ԻԿԱՕ-ի և այլ շահակիցների միջև կանցկացվի նախագծի ներկայացման հանդիպում (Project Briefing Meeting)՝ դերերի և պատասխանատվությունների վերանայման նպատակով:

8.3.2 Նախարարության և ԻԿԱՕ-ի միջև կարող են անցկացվել նախագծի վերանայման հանդիպումներ՝ համաձայն հաստատված աշխատանքային պլանի կամ ըստ անհրաժեշտության՝ նախագծի առաջընթացը գնահատելու և, անհրաժեշտության դեպքում, հետագա գործողությունների շուրջ համաձայնության գալու նպատակով: Վերանայման հանդիպումները կարող են անցկացվել ծառայության վայրում, ԻԿԱՕ-ի գլխավոր գրասենյակում, Տարածաշրջանային գրասենյակում (RO) կամ հեռակոնֆերանսի միջոցով:

8.3.3 Նախագծի ավարտական փուլում Նախարարության, ԻԿԱՕ-ի և այլ շահակիցների միջև կանցկացվի ամփոփիչ հանդիպում (Project Debriefing Meeting)՝ նախագծի արդյունքում պատրաստված նյութերի և արդյունքների քննարկման նպատակով:

8.3.4 Նախագծի ներկայացման և վերանայման բոլոր հանդիպումները կներառվեն Աշխատանքային պլանում (WP):

9. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ

9.1 ԻԿԱՕ-ի փորձագետների կողմից մշակված բոլոր արդյունքները (deliverables) ԻԿԱՕ-ի միջոցով պաշտոնապես հանձնվում են Նախարարությանը:

9.2 Նախարարությունը պարտավոր է արդյունքների ստացումը հաստատել դրանց ստացումից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում, կամ հաստատված աշխատանքային պլանով սահմանված այլ ժամկետում: Եթե նշված ժամկետում ստացման հաստատում չի ներկայացվում, ապա արդյունքները կհամարվեն ընդունված և հաստատված:

10. ԴԵՐԵՐ ԵՎ ՊԱՏՃԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1 Նախարարության դերերն ու պարտականությունները ներառում են.

ա) տրամադրել սույն փաստաթղթում նշված բոլոր ներդրումներն ու աջակցությունը,

բ) ԻԿԱՕ-ի փորձագետների հետ համատեղ մշակել մանրամասն աշխատանքային պլան, որը, ըստ անհրաժեշտության, կներառի նպատակներ, կարևորագույն կետեր (milestones), պատասխանատվություններ և կոնկրետ առաջադրանքներ՝ ԻԿԱՕ-ի քաղաքականություններին, գործելակերպին և ուղեցույցներին, ինչպես նաև սույն

Նախագծային փաստաթղթով սահմանված նպատակներին, շրջանակին և տևողությանը համապատասխան,

գ) արագացնել արդյունքների (deliverables) հաստատման գործընթացները՝ հետագա գործողությունների իրականացումը չխոչընդոտելու նպատակով,

դ) համագործակցել պետական մարմինների հետ՝ անհրաժեշտության դեպքում նոր կամ թարմացված կարգավորումների ընդունումն ու պաշտոնական հրապարակումն ապահովելու համար,

ե) ԻԿԱՕ-ին տրամադրել փորձագետների աշխատանքի գնահատական,

զ) մինչև 2026 թվականի դեկտեմբերի 15-ը ԻԿԱՕ-ին տրամադրել թարմացված բյուջետային տեղեկատվություն նախագծի իրականացման վերաբերյալ՝ նշելով Հայաստանի Հանրապետության կառավարության պատրաստակամությունն ու առաջնահերթությունները, որոնք նախատեսվում է իրականացնել հաջորդ օրացուցային տարվա ընթացքում,

է) առնվազն 30 օր առաջ ծանուցել համաձայնեցված շրջանակի և/կամ նպատակների ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդել նախագծի իրականացման վրա կամ փոխել այն (ընթացիկ տարվա ընթացքում),

ը) յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից առաջ, CDI-ի նախագծի ղեկավարի հետ համակարգմամբ, ԻԿԱՕ-ին տրամադրել թարմացված բյուջե և ներդրումների ծրագիր (Contributions Plan): Սա էական նշանակություն ունի նախագծի պլանավորման և դրամական հոսքերի արդյունավետ կառավարման համար:

10.2 ԻԿԱՕ-ի դերերն ու պարտականությունները ներառում են:

ա) տրամադրել սույն փաստաթղթում նշված ներդրումներն ու ծառայությունները,

բ) իրականացնել և վերահսկել նախագիծը CDI-ի տնօրենի ղեկավարությամբ: CDI-ի տնօրենը նախագծի գործունեության մոնիթորինգի և վերահսկողության պատասխանատվությունը կփոխանցի Բյուրոյի համապատասխան ստորաբաժանմանը և Նախագծի համակարգողին (PC),

գ) իրականացնել ֆինանսական կառավարում և բյուջետային վերահսկողություն՝ ԻԿԱՕ-ի քաղաքականություններին, կանոններին, գործելակերպին, գործընթացներին և ընթացակարգերին համապատասխան,

դ) իրականացնել անձնակազմի հրահանգավորում և նախնական ծանոթացում (briefing),

ե) վերահսկել նախագծային գործունեության իրականացումը,

զ) կառավարել և վարել ԻԿԱՕ-ի փորձագետների պայմանագրերը,

է) տրամադրել ֆինանսական հաշվետվություններ՝ ԻԿԱՕ-ի քաղաքականություններին, կանոններին, գործելակերպին, գործընթացներին և ընթացակարգերին համապատասխան,

ը) կազմակերպել փորձագետների ուղևորությունները դեպի ծառայության վայր,

թ) պաշտոնապես հաստատել նախագծի ավարտված արդյունքների (deliverables) ընդունումը,

ժ) անհրաժեշտության դեպքում վերանայել և փոփոխել Նախագծային փաստաթուղթը,

ի) իրականացնել և ձևակերպել նախագծի փակման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները:

10.1. Ենթադրվում է, որ նախագծի ամբողջ հաջողությունը հնարավոր կլինի ապահովել միայն Նախարարության համապատասխան աջակցությամբ, և դրա հաջող ավարտը պահանջում է լիարժեք համագործակցություն:

10.2. Սույն Նախագծային փաստաթուղթը չի հանդիսանում և չպետք է մեկնաբանվի որպես ԻԿԱՕ-ի կողմից տարածաշրջանային կառույցներին վերապահված կամ դրանց կողմից իրականացվող որևէ գործառնության և/կամ պատասխանատվության ճանաչում կամ հաստատում:

11. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

11.1 Սույն Նախագծային փաստաթուղթը հանդիսանում է ԻԿԱՕ-ի և Կոմիտեի միջև 2024 թվականի մարտի 8-ին կնքված MSA-ի Հավելված 1-ը և, MSA-ի 1.2 կետի համաձայն, դրա անբաժանելի մասն է կազմում: Ստորագրելով սույն Նախագծային փաստաթուղթը՝ Նախարարությունն ընդունում է նշված MSA-ի պայմանները:

11.2 Սույն Նախագծային փաստաթուղթն ուժի մեջ է մտնում երկու կողմերի կողմից դրա ստորագրման պահից և կհամարվի գործառնական առումով ակտիվ այն բանից հետո, երբ ԻԿԱՕ-ն ստանա սույն Նախագծային փաստաթղթի Հավելված Բ-ում նշված անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

11.3 Սույն Նախագծային փաստաթղթում ցանկացած փոփոխություն, լրացում կամ վերանայում, ներառյալ նախագծի շրջանակի, տևողության, բյուջեի, պարտականությունների կամ այլ դրույթների փոփոխությունները, ենթակա են երկու կողմերի գրավոր և պաշտոնական հաստատմանը:

11.4 Նախագիծը կարող է դադարեցվել ցանկացած ժամանակ, եթե Կարողությունների զարգացման և իրականացման տնօրինության (CDI) կողմից երկու պաշտոնական ծանուցում ստանալուց հետո Նախարարությունը շարունակի չկատարել սույն Նախագծային փաստաթղթի 4-րդ բաժնում սահմանված իր պարտավորությունները:

11.5 Սույն Նախագծային փաստաթղթում ներառված որևէ դրույթ չի կարող դիտվել որպես բացահայտ կամ ենթադրյալ հրաժարում դատական հայցից կամ իրավական գործընթացից անձեռնմխելիությունից, ինչպես նաև որևէ արտոնությունից, ազատումից կամ այլ անձեռնմխելիությունից, որից օգտվում է կամ կարող է օգտվել ԻԿԱՕ-ն, նրա պաշտոնատար անձինք, աշխատակիցները, ակտիվները և միջոցները՝ *համաձայն 1947 թվականի «Մասնագիտացված գործակալությունների արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին» կոնվենցիայի* կամ այլ կիրառելի կոնվենցիաների, համաձայնագրերի, օրենքների կամ հրամանագրերի:

11.6 Նախարարությունը և ԻԿԱՕ-ն կստորագրեն Նախագծային փաստաթղթի ամբողջական կոնֆիդենցիալ տարբերակը, որը կներառի Նախագծի իրականացմանը վերաբերող բոլոր պայմաններն ու դրույթները:

12. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

12.1 Նախարարությունը պարտավորվում է փոխհատուցել, անփոխհատույց պահել և, ԻԿԱՕ-ի կողմից տրված խորհրդի և լիազորման հիման վրա, պաշտպանել ԻԿԱՕ-ին, նրա պաշտոնատար անձանց, գործակալներին և աշխատակիցներին՝ բոլոր տեսակի

գործողություններից, դատական հայցերից, վարույթներից, պահանջներից, հայցերից, կորուստներից և ցանկացած բնույթի պատասխանատվությունից, որոնք ներկայացվում են ԻԿԱՕ-ի դեմ, ներառյալ, բայց չսահմանափակվելով դատական ծախսերով և ծախսադրումներով, փաստաբանական վճարներով, հաշտության վճարումներով և վնասների փոխհատուցումներով: ԻԿԱՕ-ին վնասներից և պատասխանատվությունից զերծ պահելու այս պարտավորությունը կիրառվում է անկախ այն հանգամանքից, թե տվյալ հայցերը, վարույթները, պահանջները կամ պահանջագրերը իրականում հանգեցնում են որևէ վնասի կամ պատասխանատվության, թե ոչ:

12.2 ԻԿԱՕ-ն պարտավորվում է դրա վերաբերյալ փաստացի ծանուցում ստանալուց հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել Նախարարությանը ցանկացած այդպիսի դատական հայցի, վարույթի, պահանջի, հավակնության, վնասի կամ պատասխանատվության մասին: ԻԿԱՕ-ն բացառիկ իրավունք ունի իրականացնել ԻԿԱՕ-ի արտոնությունների և անձեռնմխելիությունների, ինչպես նաև դրանց հետ կապված ցանկացած հարցի վկայակոչումն ու պաշտպանությունը, ներառյալ այն դեպքերը, երբ ԻԿԱՕ-ն հանդես է գալիս որպես Նախարարության լիազորված ներկայացուցիչ (mandatary), որի մասին հայտարարելու և այն պաշտպանելու իրավասությունը վերապահված է բացառապես ԻԿԱՕ-ին: ԻԿԱՕ-ն իրավունք ունի ցանկացած այդպիսի դատական հայցի, վարույթի, պահանջի կամ հավակնության շրջանակներում ներկայացված լինել իր ընտրությամբ անկախ իրավախորհրդատուի միջոցով, և Նախարարությունը պարտավորվում է փոխհատուցել ԻԿԱՕ-ին, ինչպես նաև ազատել և զերծ պահել նրան այդպիսի դատավարական ծախսերից, ծախսատարություններից և փաստաբանական վճարներից:

12.3 ԻԿԱՕ-ն իրավունք ունի սույն հոդվածի համաձայն իր կողմից կատարված ծախսերը հաշվանցել սույն Նախագծային փաստաթղթի շրջանակներում ստացված և դեռևս չօգտագործված ֆինանսական միջոցներից:

12.4 Սույն կետով սահմանված պարտավորությունները շարունակվում են գործել նաև սույն Նախագծային փաստաթղթի դադարեցումից հետո:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա — ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գործողություն	Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Ա8	Ա9	Ա10	Ա11	Ա12	Ա13	Ա14
Նախագծի ստորագրում														
Ֆինանսական միջոցների փոխանցում ԻԿԱՕ-ին														
Փորձագետների հավաքագրում և աշխատանքի ընդունում														
Նախագծի իրականացում														

Նշում. Վերոնշյալ ժամանակացույցը կրում է ցուցադրական բնույթ և կարող է ենթարկվել փոփոխությունների:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ — ՆԱԽԱԳԾԻ ԲՅՈՒՋԵ

ՆԱԽԱԳԾԻ ԲՅՈՒՋԵ՝ MSA ԾԱԽՍԵՐԻ ՆԵՐԱՌԱՄԱՐԻ (ԱՄՆ ԴՈԼԼԱՐ)

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
	FAM2402
ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ:	
ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎՃԱՆՈՒՄ:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱԲԱՑԻՄԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ:	0000000001
ՏԱՐԲԵՐԱԿ:	2

		ԸՆԴՀԱՆՈՒՐ		2026	
		մ/մ	\$	մ/մ	\$
ՆԱԽԱԳԾԻ ԱՆՁՆԱԿԱՋՄ					
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ					
BA21	ԶԱՂԱԲԱՑԻՄԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ	6.0	104 800	6.0	104 800
BA21	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ	6.0	104 800	6.0	104 800
BA21	ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՉԱՐՊԱՑՄԱՆ / ՄԱՐԴԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՐՄՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ	11.0	181 900	11.0	181 900
BA21	ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ / ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ	11.0	187 400	11.0	187 400
BA21	ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ	6.0	104 800	6.0	104 800
ԽՆԹԱԳՈՒՄԱՐ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ)		12.0	683 700	12.0	683 700
B41	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԱՆԱԿԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ		28 700		28 700
ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՆԱԽԱԳԾԻ ԱՆՁՆԱԿԱՋՄ)			712 400		712 400
ԱՅԼ					
BA32	ԱՅԼ ԾԱԽՍԵՐ		17 800		17 800
BA91	ՎԵՐԱԴՐԻ ԾԱԽՍԵՐ		73 000		73 000
ԸՆԴՀԱՆՈՒՐ (ԱՅԼ)			90 800		90 800
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔ			803 200		803 200

Նշում. Վերոնշյալը բյուջեի նախահաշիվ է:

ՀԱՎԵԼՎԱԾ Գ — ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԵՐ



Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն Պաշտոնի անձնագիր

ՊԱՇՏՈՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր անվանում	Քաղաքացիական ավիացիայի օրենսդրության փորձագետ
Հատուկ անվանում	Քաղաքացիական ավիացիայի օրենսդրության փորձագետ
Պաշտոնի համար (ID)	ARM24802-01
Նախագիծ	ARM24802
Աշխատանքի վայր	Հեռավար և Երևան, Հայաստան
CCOG կոդ	1G02
Տևողություն	6 ամիս (մոտավորապես 132 աշխատանքային օր), ներառյալ գործուղումներ դեպի Երևան
Սկիզբ	2026 թ. III եռամսյակ (նախնական)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍ

ԻԿԱՕ-ի Կարողությունների զարգացման և իրականացման տնօրինության (CDI) շրջանակում Գործառնությունների բաժինը (FOS) պատասխանատու է նախագծերի ռազմավարական պլանավորման, մշակման, իրականացման և գնահատման համար: FOS-ը աջակցում է քաղաքացիական ավիացիայի ոլորտում առաջնահերթ զարգացման կարիքների բացահայտմանը և տրամադրում է տեխնիկական համագործակցություն շահառու պետություններին: FOS-ը նախագծերը իրականացնում է ԻԿԱՕ/CDI քաղաքականությունների և պայմանագրային ձևաչափերի համաձայն:

ԻԿԱՕ/CDI-ն աջակցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (Կոմիտե) ինստիտուցիոնալ բարեփոխման գործընթացում, ինչպես սահմանված է ARM24802 նախագծային փաստաթղթով: Սույն նախագիծը իրականացվում է 2024 թվականի մարտի 8-ին ԻԿԱՕ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ստորագրված Կառավարման ծառայությունների համաձայնագրի (MSA) շրջանակում:

Այս շրջանակում նախագիծը տրամադրում է կառուցվածքային տեխնիկական աջակցություն՝ գործող Կոմիտեն, որը ներկայում գործում է քաղաքացիական ծառայության սահմանափակումների ներքո կառավարության ստորաբաժանման ձևաչափով, վերափոխելու ինքնավար, տեխնիկական հզոր և ֆինանսապես կայուն մարմնի, որը լիարժեք կկարողանա իրականացնել իր անվտանգության վերահսկողության գործառնությունները՝ ԻԿԱՕ-ի Ստանդարտների և առաջարկվող գործելակերպերի (SARPs) համաձայն:

Ի լրումն, այս նախագիծը նպատակ ունի աջակցել անհրաժեշտ ինստիտուցիոնալ բարեփոխումներին՝ ուղղված Բաժնի արդյունավետության, կայունության և անկախության ամրապնդմանը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտը ներկայումս կարգավորվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (Կոմիտե) կողմից, որը պետական մարմին է և գործում է պետական քաղաքացիական ծառայության շրջանակում: Կոմիտեն բախվում է կառուցվածքային մարտահրավերների, որոնք սահմանափակում են դրա արդյունավետությունը՝ որպես թռիչքների անվտանգության վերահսկողություն իրականացնող մարմին. այն գործում է քաղաքացիական ծառայության մարդկային ռեսուրսների համակարգերի ներքո, որոնք սահմանափակում են որակավորված տեխնիկական մասնագետների ներգրավման և պահպանման հնարավորությունը, կախված է պետական բյուջեից՝ սահմանափակ ծախսերի փոխհատուցման մեխանիզմներով, և նրա հիմնական օրենսդրական ու կարգավորող շրջանակը պահանջում է արդիականացում՝ ԻԿԱՕ SARP-ին համապատասխանեցվելու համար:

ԻԿԱՕ-ի Համընդհանուր անվտանգության վերահսկողության աուդիտի ծրագրի (USOAP) արդյունքներով բացահայտվել են Հայաստանի թռիչքների անվտանգության վերահսկողության կարողությունների բացեր, որոնք կարող են կայուն կերպով վերացվել միայն հիմնարար ինստիտուցիոնալ բարեփոխումների միջոցով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ԻԿԱՕ-ի հետ համագործակցությամբ, պարտավորվել է վերափոխել Կոմիտեն ինքնավար մարմին, որը կկարողանա կայուն հիմունքներով իրականացնել իր անվտանգության վերահսկողության մանդատը, ինչպես նաև բարձրացնել Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի (Բաժին) արդյունավետությունը, կայունությունը և անկախությունը:

ARM24802 նախագիծը աջակցում է այս վերափոխմանը երեք փոխկապակցված բարեփոխման ուղղություններով՝

- (i) Ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխում՝ ինքնավար Կոմիտեի և անկախ Բաժնի իրավական, կարգավորող և կառավարման շրջանակների ստեղծում,
- (ii) Կազմակերպական, վարչական և գործառնական վերանայում՝ հաստատության կառուցվածքի, գործընթացների և ձեռնարկների վերաձևավորում,
- (iii) Կայուն ֆինանսավորման և մարդկային ռեսուրսների շրջանակ՝ ծախսերի փոխհատուցման մեխանիզմների և մրցունակ մարդկային ռեսուրսների համակարգի ստեղծում՝ որակավորված անձնակազմ ներգրավելու և պահպանելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

ARM24802 նախագծի փորձագիտական թիմը բաղկացած է հետևյալ մասնագետներից՝

- Փորձագետ 1՝ Քաղաքացիական ավիացիայի օրենսդրության փորձագետ (6 ամիս)
- Փորձագետ 2՝ Ֆինանսական և բյուջետային հարցերի փորձագետ (6 ամիս)
- Փորձագետ 3՝ Կազմակերպական զարգացման / մարդկային ռեսուրսների փորձագետ (11 ամիս)
- Փորձագետ 4՝ Կոմիտեի կառավարման փորձագետ / նախագծի համակարգող (11 ամիս)
- Փորձագետ 5՝ Բաժնի կառավարման փորձագետ (6 ամիս)

Ներկայիս Կոմիտեի և Բաժնի համապատասխան անձնակազմը կմասնակցի աշխատանքներին ողջ նախագծի ընթացքում՝ համագործակցելով յուրաքանչյուր մասնագետի հետ և ԻԿԱՕ-ի ուղղորդմամբ առաջնորդելով բարեփոխումների իրականացումը:

ՇՐՋԱՆԱԿ

Ընդհանուր առմամբ, ARM24802 նախագծում նախատեսված գործողությունները, որոնց իրականացմանը կնպաստեն բոլոր թիմի անդամները, ներառում են հետևյալը.

1. Ախտորոշման փուլ՝ Կոմիտեի և Բաժնի իրավական, ինստիտուցիոնալ, կազմակերպական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների շրջանակների գնահատում, ինչպես նաև USOAP-ի արդյունքների և ազգային օրենսդրական համատեքստի վերանայում:

2. Բարեփոխումների նախագծման փուլ՝ բարեփոխումների առաջարկությունների, օրենսդրական նախագծերի, կազմակերպական մոդելների, ֆինանսական շրջանակների և մարդկային ռեսուրսների քաղաքականությունների մշակում՝ համապատասխանեցված ԻԿԱՕ SARP-ին, համապատասխան ուղեցույցներին և լավագույն փորձին, ըստ կիրառելիության:

3. Իրականացման աջակցության փուլ՝ տեխնիկական աջակցություն Կոմիտեին և Բաժնին՝ հաստատված բարեփոխումների իրականացման համար, ներառյալ անձնակազմի կարողությունների զարգացում և շահակիցների ներգրավում:

Այս պաշտոնի աշխատանքային հատուկ շրջանակը

1. Իրականացնել Հայաստանի գործող ավիացիոն օրենսդրության՝ ներառյալ «Ավիացիայի մասին» օրենքի և ենթաօրենսդրական ակտերի համապարփակ վերանայում և բացերի վերլուծություն՝ դրանց համապատասխանեցնելու Չիկագոյի կոնվենցիայի պարտավորություններին, ԻԿԱՕ SARP-ին, համապատասխան ուղեցույցներին (ներառյալ ԻԿԱՕ Doc 9734-ը) և լավագույն փորձին, ըստ կիրառելիության:

2. Մշակել առաջարկություններ և օրենսդրական փոփոխությունների նախագծեր՝ Կոմիտեի ինքնավար գործունեության իրավական հիմքի ստեղծման համար, ներառյալ կառավարման մոդելը, կարգավորող մանդատը, կիրարկման լիազորությունները և հաշվետվողականության շրջանակը:

3. Մշակել առաջարկություններ և օրենսդրական փոփոխությունների նախագծեր՝ Բաժնի արդյունավետ, կայուն և անկախ գործունեության իրավական հիմքի ստեղծման համար:

4. Մշակել կամ էականորեն վերանայել Հայաստանի քաղաքացիական ավիացիայի հիմնական օրենքը՝ ապահովելու գործող Կոմիտեի վերափոխումը ինքնավար Կոմիտեի, ներառյալ ինստիտուցիոնալ և ֆինանսական ինքնավարության դրույթները:

5. Մշակել օրենսդրական և կարգավորիչ իրականացման ճանապարհային քարտեզ, ներառյալ անցումային դրույթները, երկրորդային օրենսդրությունը և կարգավորիչ հրամանները, որոնք անհրաժեշտ են ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն ապահովելու համար:

6. Համապատասխանեցնել Հայաստանի օրենսդրական շրջանակը ԻԿԱՕ-ի Հավելվածների պահանջներին և դոկ 9734 (Անվտանգության վերահսկողության աուդիտի ձեռնարկ) դրույթներին՝ Կոմիտեի և Բաժնի կառավարման, ինքնավարության/անկախության և կարգավորիչ գործառնությունների մասով:

7. Խորհրդատվություն տրամադրել թռիչքների անվտանգության վերահսկողության հիմնական գործառնությունների կարգավորիչ շրջանակի վերաբերյալ՝ ներառյալ սերտիֆիկացումը, լիցենզավորումը, վերահսկողությունը, կիրարկումը և պատահարների ու միջադեպերի քննությունը:

8. Համակարգել աշխատանքները մյուս փորձագետների հետ՝ Նախագծի համակարգողի

(Փորձագետ 4) միջոցով՝ մարդկային ռեսուրսների և ֆինանսական բարեփոխումների իրավական ասպեկտների մասով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր փորձագետի կողմից իրականացվող աշխատանքի ընդհանուր նպատակն է՝ որպես թիմի անդամ և Նախագծի համակարգողի (Փորձագետ 4) ղեկավարությամբ, նպաստել գործող Կոմիտեի ինստիտուցիոնալ վերափոխմանը՝ այն դարձնելով կառուցվածքային առումով ինքնավար, տեխնիկապես կարողունակ և ֆինանսապես կայուն մարմին, ինչպես նաև բարձրացնել Բաժնի արդյունավետությունը, կայունությունը և անկախությունը՝ համաձայն ARM24802 նախագծի նպատակների:

ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր պարտականություններ և պատասխանատվություններ՝

1. Իրականացնել պարտականությունները՝ Նախագծի համակարգողի համակարգմամբ և իր լավագույն կարողությունների սահմաններում՝ նախագծի նպատակների իրականացման համար:
2. Անհրաժեշտության դեպքում մասնակցել փորձագիտական թիմի մյուս անդամների կողմից մշակված բաժինների վերանայմանը և համադրությանը:
3. Հավաքագրել անհրաժեշտ փաստաթղթերը աշխատանքների իրականացման համար:
4. Պատշաճ կերպով նախապատրաստել հանդիպումները և տեղում իրականացվող այցերը, ներառյալ շահագրգիռ կողմերի ցանկերի, հարցաթերթիկների, ինչպես նաև համապատասխան այցերի և հանդիպումների հաշվետվությունների պատրաստումը:
5. Մասնակցել ԻԿԱՕ CDI-ի, EUR/NAT պատասխանատու պաշտոնյաների և նախագծի ազգային համակարգողի կողմից կազմակերպվող համակարգման հանդիպումներին:
6. Ապահովել, որ ԻԿԱՕ-ի թեխքների անվտանգության, ավիացիոն անվտանգության և կայունության պահանջները, որոնք կիրառելի են տարբեր աշխատանքային ուղղությունների համար, ներառվեն բոլոր արդյունքներում:
7. Նախագծի համակարգողի ղեկավարությամբ մասնակցել մանրամասն աշխատանքային պլանի մշակմանը՝ ներառելով ժամկետները և յուրաքանչյուր թիմի անդամի պարտականությունները:
8. Նպաստել ամսական նախագծի մոնիթորինգի հաշվետվությունների պատրաստմանը, որոնք ներկայացվում են ԻԿԱՕ CDI-ին, EUR/NAT պատասխանատու պաշտոնյաներին և նախագծի ազգային համակարգողին:
9. Նպաստել բոլոր հաշվետվությունների և փաստաթղթերի վերանայմանը և դրանց ինտեգրմանը վերջնական արդյունքների մեջ:
10. Պատրաստել սահիկաշարեր նախագծի առաջընթացի բրիֆինգների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության, ԻԿԱՕ-ի և այլ շահագրգիռ կողմերի համար:

ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վերանայել և քարտեզագրել Հայաստանի գործող ավիացիոն օրենսդրությունը՝ համեմատելով

այն ԻԿԱՕ Չիկագոյի կոնվենցիայի պարտավորությունների, SARPs-ի, համապատասխան ուղեցույցների (ներառյալ ԻԿԱՕ Doc 9734) և լավագույն փորձի հետ՝ ըստ կիրառելիության, և պատրաստել օրենսդրական բացերի վերլուծության զեկույց:

2. Մշակել կամ էականորեն վերանայել քաղաքացիական ավիացիայի հիմնական օրենքը և հիմնական ենթաօրենսդրական ակտերը՝ ստեղծելու իրավական հիմք ինքնավար Կոմիտեի և անկախ Բաժնի համար:

3. Մշակել իրավական և կանոնակարգման ճանապարհային քարտեզ՝ ներառյալ անցումային դրույթները:

4. Իրավական տեսանկյունից տրամադրել խորհրդատվություն ԻԿԱՕ-ի պահանջներին համապատասխանության վերաբերյալ՝ ներառյալ Չիկագոյի կոնվենցիայի պայմանագրային պարտավորությունները և USOAP-ի ուղղիչ գործողությունների պահանջները:

5. Համակարգել աշխատանքները պետական իրավական խորհրդատուների, Արդարադատության նախարարության և Ազգային ժողովի աշխատակազմի հետ՝ օրենսդրական նախագծերի մշակման գործընթացներում:

6. Անհրաժեշտության դեպքում տրամադրել իրավական կարծիքներ բարեփոխված Կոմիտեի և Բաժնի ինստիտուցիոնալ կարգավիճակի, լիազորությունների և հաշվետվողականության վերաբերյալ՝ նախագծի ընթացքում ըստ անհրաժեշտության:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Իրավագիտության բարձրագույն կրթություն՝ հանրային իրավունքի, վարչական իրավունքի կամ միջազգային իրավունքի ուղղվածությամբ: Քաղաքացիական ավիացիայի իրավունքի կամ օդային իրավունքի մասնագիտացված կրթությունը (մագիստրոսի աստիճան կամ համարժեք) ցանկալի է:

ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Առնվազն 15 տարվա մասնագիտական փորձ ավիացիոն իրավունքի, հանրային իրավունքի կամ կարգավորիչ բարեփոխումների ոլորտում, այդ թվում՝ առնվազն 5 տարի՝ հատուկ քաղաքացիական ավիացիայի օրենսդրության ոլորտում:

Ցուցադրված փորձ՝ ավիացիոն օրենսդրության կամ քաղաքացիական ավիացիայի մարմինների ստեղծման կամ բարեփոխման վերաբերյալ հիմնական օրենքների մշակման ոլորտում:

ԻԿԱՕ-ի «Քաղաքացիական ավիացիայի մասին» Չիկագոյի կոնվենցիայի, դրա հավելվածների և ԻԿԱՕ SARPs-ի խորացված իմացություն:

ԻԿԱՕ դոկ 9734 (Անվտանգության վերահսկողության աուդիտի ձեռնարկ) փաստաթղթի և քաղաքացիական ավիացիոն իշխանությունների գործառնական կառավարման շրջանակների հետ աշխատանքային փորձ:

Պետական օրենսդրական բարեփոխումների գործընթացներում ապացուցված փորձ. նախընտրելի է զարգացող կամ անցումային տնտեսությամբ երկրների համատեքստում:

ԱԳՀ/Արևելյան Եվրոպայի ավիացիոն կանոնակարգող և իրավական համակարգի հետ ծանոթությունը ցանկալի է:

ԼԵԶՎԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անգլերենի գրավոր և բանավոր գերազանց իմացություն: Ռուսերենի կամ հայերենի իմացությունը համարվում է էական առավելություն:

ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

- Դատողություն/որոշումների կայացում՝ ցուցաբերել պատասխանատվություն բոլոր պարտականությունների կատարման և հանձնառությունների իրականացման նկատմամբ, կիրառել հասուն դատողություն, բացահայտել հիմնական խնդիրները և վերլուծել համապատասխան տեղեկատվությունը, ձևակերպել իրատեսական առաջարկություններ և կայացնել հիմնավորված որոշումներ:
- Հաղորդակցություն՝ անգլերեն լեզվով հստակ և հակիրճ գրելու, ինչպես նաև բանավոր հաշվետվություններ ներկայացնելու կարողություն:
- Թիմային աշխատանք՝ գործընկերների հետ աշխատելու կարողություն՝ նախագծի նպատակներին հասնելու համար և պահպանելու ներդաշնակ աշխատանքային հարաբերություններ բազմազգ միջավայրում:
- Առաջնորդություն, տեսլական և կատարողականի կառավարում՝ ցուցաբերել կարողություն բազմազգ միջավայրում տեխնիկական աշխատանքները պլանավորելու և ուղղորդելու, առաջնահերթությունները բացահայտելու և անհրաժեշտության դեպքում դրանք հարմարեցնելու:
- Հաճախորդի/շահառուի կենտրոնացում՝ արտաքին համագործակիցների հետ գործընկերային հարաբերություններ հաստատելու և պահպանելու, կոնսենսուսի վրա հիմնված համակարգում արդյունավետ աշխատելու և շահերը ներկայացնելու, ինչպես նաև կոնֆլիկտները հաջողությամբ կառավարելու և լուծելու կարողություն:
- Շարունակական ուսուցման հանձնառություն՝ մասնագիտական ոլորտի նոր զարգացումներին մշտապես հետևելու պատրաստակամություն:
- Տեխնոլոգիական գիտելիքներ՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիական գործիքներ, գրասենյակային ավտոմատացման ծրագրեր և տվյալների բազաներ օգտագործելու կարողություն:



Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՊԱՇՏՈՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր անվանում	Ֆինանսական և բյուջետային հարցերի փորձագետ
Հատուկ անվանում	Ֆինանսական և բյուջետային հարցերի փորձագետ-քաղաքացիական ավիացիայի մարմնի բարեփոխում
Պաշտոնի համար (ID)	ARM24802-02
Նախագիծ	ARM24802
Աշխատանքի վայր	Հեռավար և Երևան, Հայաստան
CCOG կոդ	1B01
Տևողություն	6 ամիս (մոտավորապես 132 աշխատանքային օր), ներառյալ գործուղումներ դեպի Երևան
Սկիզբ	2026 թ. III եռամսյակ (նախնական)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍ

ԻԿԱՕ-ի Կարողությունների զարգացման և իրականացման տնօրինության (CDI) շրջանակում Գործառնությունների բաժինը (FOS) պատասխանատու է նախագծերի ռազմավարական պլանավորման, մշակման, իրականացման և գնահատման համար: FOS-ը աջակցում է քաղաքացիական ավիացիայի ոլորտում առաջնահերթ զարգացման կարիքների բացահայտմանը և տրամադրում է տեխնիկական համագործակցություն շահառու պետություններին: FOS-ը նախագծերը իրականացնում է ԻԿԱՕ/CDI քաղաքականությունների և պայմանագրային ձևաչափերի համաձայն:

ԻԿԱՕ/CDI-ն աջակցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (Կոմիտե) ինստիտուցիոնալ բարեփոխման գործընթացում, ինչպես սահմանված է ARM24802 նախագծային փաստաթղթով: Սույն նախագիծը իրականացվում է 2024 թվականի մարտի 8-ին ԻԿԱՕ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ստորագրված Կառավարման ծառայությունների համաձայնագրի (MSA) շրջանակում:

Այս շրջանակում նախագիծը տրամադրում է կառուցվածքային տեխնիկական աջակցություն՝ գործող Կոմիտեն, որը ներկայում գործում է քաղաքացիական ծառայության սահմանափակումների ներքո կառավարության ստորաբաժանման ձևաչափով, վերափոխելու ինքնավար, տեխնիկապես հզոր և ֆինանսապես կայուն մարմնի, որը լիարժեք կկարողանա իրականացնել իր անվտանգության վերահսկողության մանդատը՝ ԻԿԱՕ SARPs-ի համաձայն:

Ի լրումն, սույն նախագիծը նպատակ ունի աջակցել անհրաժեշտ ինստիտուցիոնալ բարեփոխումներին՝ ուղղված Բաժնի արդյունավետության, կայունության և անկախության ամրապնդմանը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտը ներկայում կարգավորվում է Քաղաքացիական

ավիացիայի կոմիտեի (Կոմիտե) կողմից, որը պետական մարմին է և գործում է պետական քաղաքացիական ծառայության շրջանակում: Կոմիտեն բախվում է կառուցվածքային մարտահրավերների, որոնք սահմանափակում են նրա արդյունավետությունը՝ որպես թռիչքների անվտանգության վերահսկողություն իրականացնող մարմին. այն գործում է քաղաքացիական ծառայության մարդկային ռեսուրսների համակարգերի ներքո, որոնք սահմանափակում են որակավորված տեխնիկական մասնագետների ներգրավման և պահպանման հնարավորությունը, կախված է պետական բյուջեից՝ սահմանափակ ծախսերի փոխհատուցման մեխանիզմներով, և նրա հիմնական օրենսդրական ու կարգավորող շրջանակը պահանջում է արդիականացում՝ համապատասխանեցվելու ԻԿԱՕ SARP-ին, համապատասխան ուղեցույցներին և լավագույն փորձին, ըստ կիրառելիության:

ԻԿԱՕ-ի Համընդհանուր անվտանգության վերահսկողության աուդիտի ծրագրի (USOAP) արդյունքներով բացահայտվել են Հայաստանի անվտանգության վերահսկողության կարողությունների բացեր, որոնք կարող են կայուն կերպով վերացվել միայն հիմնարար ինստիտուցիոնալ բարեփոխումների միջոցով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ԻԿԱՕ-ի հետ համագործակցությամբ, պարտավորվել է վերափոխել Կոմիտեն ինքնավար մարմին, որը կկարողանա կայուն հիմունքներով իրականացնել իր անվտանգության վերահսկողության մանդատը, ինչպես նաև բարձրացնել Բաժնի արդյունավետությունը, կայունությունը և անկախությունը:

ARM24802 նախագիծը աջակցում է այս վերափոխմանը երեք փոխկապակցված բարեփոխման ուղղություններով՝

- (i) Ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխում՝ ինքնավար Կոմիտեի և անկախ Բաժնի իրավական, կարգավորող և կառավարման շրջանակների ստեղծում,
- (ii) Կազմակերպական, վարչական և գործառնական վերանայում՝ հաստատության կառուցվածքի, գործընթացների և ձեռնարկների վերաձևավորում,
- (iii) Կայուն ֆինանսավորման և մարդկային ռեսուրսների շրջանակ՝ ծախսերի փոխհատուցման մեխանիզմների և մրցունակ HR համակարգի ստեղծում՝ որակավորված անձնակազմ ներգրավելու և պահպանելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

ARM24802 նախագծի փորձագիտական թիմը բաղկացած է հետևյալ մասնագետներից՝

- Փորձագետ 1՝ Քաղաքացիական ավիացիայի օրենսդրության փորձագետ (6 ամիս)
- Փորձագետ 2՝ Ֆինանսական և բյուջետային հարցերի փորձագետ (6 ամիս)
- Փորձագետ 3՝ Կազմակերպական զարգացման / մարդկային ռեսուրսների փորձագետ (11 ամիս)
- Փորձագետ 4՝ Կոմիտեի կառավարման փորձագետ / նախագծի համակարգող (11 ամիս)
- Փորձագետ 5՝ Բաժնի կառավարման փորձագետ (6 ամիս)

Ներկայիս Կոմիտեի և Բաժնի համապատասխան անձնակազմը կմասնակցի աշխատանքներին ողջ նախագծի ընթացքում՝ համագործակցելով յուրաքանչյուր մասնագետի հետ և ԻԿԱՕ-ի ուղղորդմամբ առաջնորդելով բարեփոխումների իրականացումը:

ՇՐՋԱՆԱԿ

Ընդհանուր առմամբ, ARM24802 նախագծում նախատեսված գործողությունները, որոնց իրականացմանը կնպաստեն բոլոր թիմի անդամները, ներառում են հետևյալը.

1. Ախտորոշման փուլ՝ Կոմիտեի և Բաժնի իրավական, ինստիտուցիոնալ, կազմակերպական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների շրջանակների գնահատում, ինչպես նաև USOAP-ի արդյունքների և ազգային օրենսդրական համատեքստի վերանայում:
2. Բարեփոխումների նախագծման փուլ՝ բարեփոխումների առաջարկությունների, օրենսդրական նախագծերի, կազմակերպական մոդելների, ֆինանսական շրջանակների և մարդկային ռեսուրսների քաղաքականությունների մշակում՝ համապատասխանեցված ԻԿԱՕ SARP-ին, համապատասխան ուղեցույցներին և լավագույն փորձին, ըստ կիրառելիության:
3. Իրականացման աջակցության փուլ՝ տեխնիկական աջակցություն Կոմիտեին և Բաժնին՝ հաստատված բարեփոխումների իրականացման համար, ներառյալ անձնակազմի կարողությունների զարգացում և շահակիցների ներգրավում:

ՀԱՏՈՒԿ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ՝ ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ

1. Իրականացնել Կոմիտեի և Բաժնի գործող բյուջետային մոդելի, ֆինանսավորման աղբյուրների, ծախսերի կառուցվածքի, վճարների սակագների (ամկայության դեպքում) և ֆինանսական կառավարման համակարգերի համապարփակ գնահատում:
2. Նախագծել կայուն ֆինանսավորման մեխանիզմ՝ ապագա ինքնավար Կոմիտեի համար, ներառյալ ծախսերի փոխհատուցման մեխանիզմները, ավիացիոն ծառայությունների (սերտիֆիկացում, լիցենզավորում, օդանավերի պիտանիության հաստատումներ, տեսչական ստուգումներ) վճարային սակագները և եկամուտների դիվերսիֆիկացման տարբերակները:
3. Նախագծել Բաժնի արդյունավետ և կայուն ֆինանսավորման մեխանիզմ, ներառյալ արտակարգ ֆինանսավորման հնարավորությունը խոշոր ավիացիոն պատահարների քննությունների դեպքում:
4. Համեմատական վերլուծություն իրականացնել առաջարկվող ֆինանսավորման մեխանիզմների վերաբերյալ՝ համադրելով նմանատիպ պետությունների լավագույն փորձի հետ և հղում կատարելով ԻԿԱՕ-ի համապատասխան ուղեցույցներին:
5. Գնահատել անցումային ֆինանսական պահանջները՝ բյուջեի փոխանցման կարգավորումները, ժամանակավոր ֆինանսավորման լուծումները և ինքնավար Կոմիտեի ու անկախ Բաժնի մեկնարկային ծախսերի գնահատումը:
6. Մշակել բազմամյա ֆինանսական կանխատեսումներ և բարեփոխված Կոմիտեի բիզնես-հիմնավորում՝ ներառյալ գործառնական ծախսերը, անձնակազմը, ենթակառուցվածքները և վճարային եկամուտները:
